

#StrongerTogether
#EasternPartnership

EaP | Eastern
Partnership 

20 թիրախային արդյունք 2020-ի համար.
Շոշափելի արդյունքների ապահովում
քաղաքացիների համար

2021թ. նոյեմբեր

2017թ. նոյեմբերին կայացած Արևելյան գործընկերության (ԱԳ) գագաթնաժողովում ԵՄ անդամ պետությունները և կրա արևելյան գործընկեր երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան հավանություն տվեցին «20 թիրախային արդյունք 2020-ի համար» հավակնոտ բարեփոխումների օրակարգին: Դրա արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն քաղաքացիների համար շոշափելի օգուտներ է ապահովել չորս հիմնական ոլորտներում՝ տնտեսություն, կառավարում, կապ և հասարակություն: Այդուհանդերձ, դեռևս օրախնդիր են մի շարք մարտահրավերներ, մասնավորապես՝ օրենքի գերակայության, քաղաքացիական հասարակության, ՉԼՄ-ների և գենդերային հիմնահարցերի ոլորտներում:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼԴՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐ



- ✓ ԵՄ-ն աջակցել է ավելի քան **185,000 ՓՄՁ-ի**՝ ստեղծելով կամ պահպանելով **1,65 մլն աշխատատեղ**:
- ✓ ԱԳ տարածաշրջանը առևտրի ծավալով դարձել է ԵՄ խոշորագույն 10-րդ գործընկերը: 2020 թվականին ԵՄ-ի և ԱԳ-ի միջև առևտրի ծավալը հասել է **ավելի քան 65 միլիարդ եվրոյի**:

ԿԱԴԻ ԱՄՐԱՊԼԴՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐ



- ✓ **Արևելյան գործընկերության տարածաշրջանի տեղական ինքնակառավարման մարմինների մոտ 50%-ը** տեղական էներգետիկայի և կլիմայի գործողությունների ոլորտում ԵՄ նախաձեռնության՝ Քաղաքապետերի դաշնագրի շրջանակներում **հանձն են առել կրճատել ածխաթթու գազի (CO2) արտանետումները**:
- ✓ **Տրանսպորտային կապերի և ենթակառուցվածքների բարելավում**՝ TENT-T ներդրումային գործողությունների ծրագրի շրջանակներում մինչև 2030թ. 4,800 կմ երկարությամբ ճանապարհների և երկաթուղիների կառուցման ու վերանորոգման ուղղությամբ առաջնահերթ ներդրումների հաշվին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄՐԱՊԼԴՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐ



- ✓ Կոռուպցիայի դեմ պայքարն ամրապնդվել է **Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում ունեցվածքի էլեկտրոնային հայտարարագրման համակարգերի ներդրման** շնորհիվ: **Ադրբեջանը** համաձայնություն է տվել աշխատել այդ ուղղությամբ:
- ✓ Հանրային ծառայությունների մատուցումը բարելավվել է գործընկեր բոլոր երկրներում **միասնական պատուհանների և էլեկտրոնային կառավարման ծառայությունների** ներդրման շնորհիվ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆՈՒՄ

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ



✓ ԵՄ-ն աջակցել է երիտասարդներին՝ նրանց առաջարկելով **փոխանակման ավելի քան 80,000 հնարավորություն**, այդ թվում «Էրազմուս +»-ի միջոցով:

✓ Թբիլիսիում գտնվող **Եվրոպական դպրոցը գործում է 2018թ. սեպտեմբերից** և բարձրորակ կրթություն է տրամադրում ապագա առաջնորդներին:

ՄԻՋԱՆՑԻԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ



- ✓ **Ընտանեկան բռնության դեմ պայքարի** շրջանակներում **Հայաստանը, Մոլդովան և Ուկրաինան** ստորագրել են, իսկ Վրաստանը՝ վավերացրել է Ստամբուլի կոնվենցիան: **Ադրբեջանը** հաստատել է ընտանեկան բռնության դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը և սկսել ներքին գործընթաց Կոնվենցիան ստորագրելու ուղղությամբ:
- ✓ **Գործընկեր երկրներում ամրապնդվել է ԵՄ-ի նկատմամբ հանրային աջակցությունը**. քաղաքացիների 66%-ը դրական է գնահատել:

Առաջիկա մարտահրավերներ

Դեռևս արդիական են մի շարք մարտահրավերներ, մասնավորապես, երբ խոսքը գնում է օրենքի գերակայության, դատաիրավական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի և կազմակերպված հանցավորության մասին: Շարունակում են լրջորեն մտահոգել ՉԼՄ-ների անկախության, քաղաքացիական հասարակության, գենդերային հավասարության և խտրականության դեպ պայքարի հետ կապված խնդիրները: 2020-ից հետո վերականգնման, դիմակայունության և բարեփոխումների օրակարգում կենտրոնական նշանակություն կունենան նաև կլիմայի մեղմացման և շրջակա միջավայրի պաշտպանության հիմնահարցերը: